

<https://doi.org/10.46991/hc.2022.17.1.135>

Նարեկ Մարտիրոսյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1912-1914 ԹԹ.: ՕՍՄԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՀԱՅ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԱՐՏԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

Հիմնաբառեր. Օսմանյան խորհրդարան, հայ պատգամավորներ, Հայկական հարց, մեծ տերություններ, Կ. Պոլսի դեսպանաժողով, Ապահովության հանձնաժողով, Բարենորոգումների ծրագիր, եվրոպացի տեսուչներ:

1912-1914 թթ. մեծ տերությունների՝ Հայկական հարցի քննարկումներում իրենց լուրջ ունեցան օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորները: Օսմանյան խորհրդարանի 1912 թ. լուծարումից հետո հայ պատգամավորները, մի կողմից, ձեռնամուխ են լինում բարենորոգումների նախագիծ կազմելուն և այն մեծ տերություններին հավուր պատշաճի ներկայացնելուն, մյուս կողմից՝ ստանձնում են երիտթուրքական իշխանությունների հետ բանակցելու դժվարին ու վտանգավոր գործը: Երիտթուրքերը, ընդհակառակը, ամեն ինչ արեցին, որ խոչընդոտեն բանակցային գործընթացը և դրանով իսկ կանխեն բարեփոխումների իրականացումը: Հայ պատգամավորները բանակցություններին չխոչընդոտելու նպատակով, սկսած 1913 թվականից, դադարեցրին իրենց հանդիպումները երիտթուրքերի հետ: Արդյունքում 1914 թ. հունվարի 26-ին Ռուսաստանի ու Օսմանյան կայսրության միջև ստորագրվեց համաձայնագիր՝ Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու վերաբերյալ: Հայ պատգամավորների նախաձեռնությամբ կապ հաստատվեց եվրոպացի տեսուչներ Ն. Հոֆֆի ու Լ. Վեստենենկի հետ: 1914 թ. մայիսին Թալեաթ փաշան եվրոպացի տեսուչների հետ կնքեց համաձայնագիր, ըստ որի՝ Արևմտյան Հայաստանում իրական իշխանությունը տեսուչներից անցնում էր երիտթուրքերի ձեռքը: Չրավարարվելով անգամ այս համեստ համաձայնագրով՝ երիտթուրքերը 1914 թ. հունիսին տեսուչներից պահանջեցին լքել Օսմանյան կայսրությունը:

Narek Martirosyan
Applicant (PhD studies) at the Institute of History of NAS RA

**THE ARMENIAN QUESTION IN 1912-1914 AND THE EXTRA-PARLIAMENTARY
ACTIVITIES OF THE ARMENIAN MPS OF THE OTTOMAN PARLIAMENT**

Keywords: Ottoman parliament, Armenian deputies, Armenian question, Great powers, negotiations of ambassadors to Constantinople,

Հայկական հարցը 1912-1914 թթ.: Օսմանյան խորհրդարանի
հայ պատգամավորների արտախորհրդարանական գործունեությունը
The Armenian Issue in 1912-1914 and the Extra-Parliamentary
Activities of the Armenian Deputies of the Ottoman Parliament

Security committee, reform plan, European inspectors.

Armenian MPs of the Ottoman Parliament made a contribution to the discussion of the Armenian Question by the Great Powers in 1912-1914. The Armenian MPs, on the one hand, undertook, in the structure of the commission, to develop a plan for reforms in Western Armenia and duly present it to the Great Powers, and on the other hand, undertook such a difficult and dangerous task as the negotiations with the authorities of Young Turks. Young Turks, on the contrary, did everything to obstruct the negotiation process and thereby prevent reforms. Armenian MPs since 1913 stopped meetings with Young Turks so as not to interfere with the negotiation process. Soon, on January 26, 1914 there was signed an agreement between Russia and the Ottoman Empire on the implementation of reforms in Western Armenia. On the initiative of the Armenian MPs, contacts with the European inspectors Hoff and Vestenenk were established. In May of 1914, Talaat Pasha signed an agreement with the European inspectors, according to which real power in Western Armenia passed from inspectors to the hands of the Young Turks. The Young Turks, dissatisfied with even this modest agreement, in June of 1914, demanded from the inspectors to leave the Ottoman Empire.

Нарек Мартиросян

Соискатель в институте истории НАН РА

**АРМЯНСКИЙ ВОПРОС В 1912-1914ГГ. И ВНЕПАРЛАМЕНТСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ
АРМЯНСКИХ ДЕПУТАТОВ ОСМАНСКОГО ПАРЛАМЕНТА**

Ключевые слова: Османский парламент, армянские депутаты, Армянский вопрос, Великие державы, переговоры послов в Константинополя, комитет Безопасности, план реформ, европейские инспекторы.

Армянские депутаты османского парламента внесли вклад в обсуждение армянского вопроса Великими державами в 1912-1914гг. Армянские депутаты, с одной стороны, обязуются разработать в составе комиссии план реформ в Западной Армении и должным образом представить ее великим державам, а с другой стороны, предпринять такую трудную и опасную задачу как переговоры с младотурецкими властями. Мадотурки, наоборот, сделали все в своих силах чтобы помешать переговорному процессу и тем самым предотвратить проведение реформ. Армянские депутаты с 1913г. перестали встречаться с младотурками, чтобы не мешать переговорному процессу. В итоге 26-ого января 1914г. был подписан договор между Россией и Османской империей о проведении реформ в Западной Армении. По

инициативе армянских депутатов состоялся контакт с европейскими инспекторами Н. Хоффом и Л.Вестененком. В Мае 1914г. Талаат паша подписал соглашение с европейскими инспекторами, согласно которому реальная власть в Западной Армении переходила от инспекторов в руки младотурок. Младотурки, которых не устраивало даже подобное скромное соглашение, в июне 1914г. требовали от инспекторов покинуть Османскую империю.

* * *

Ներածություն: Հայկական հարցը 1912-1914 թթ. քիչ թե շատ ուսումնասիրված է հայ պատմագրության կողմից: Ցավոք, չենք կարող նույն պնդումն անել օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների ներխորհրդարանական ու արտախորհրդարանական գործունեության մասին: Առանձին-առանձին, դրվագային ուսումնասիրություններ, անշուշտ, կան Գրիգոր Չոհրապի և Համբարձում Բոյաջյանի (Մեծն Մուրադ) խորհրդարանական գործունեությունից, սակայն այդ աշխատությունները չեն տալիս հայ պատգամավորների գործունեության ամբողջական պատկերը: Հայկական հարցը 1912-1914 թթ. մեծ տերությունների՝ Կ. Պոլսի քննարկումներում ու դրանցում հայ պատգամավորների ունեցած ներդրման անաչառ լուսաբանումն արդիական են ոչ միայն պատմագիտական, այն դիվանագիտական տեսանկյունից: Օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների, հայ պատգամավորական խմբակցության գործունեությունը խորհրդարանից դուրս և նրա շրջանակներում առաջին անգամ է ուսումնասիրվում:

1912-1914 թթ. մեծ տերությունների՝ Հայկական հարցի քննարկումներում իրենց լուրման ունեցան օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորները: Օսմանյան խորհրդարանի 1912 թ. լուծարումից հետո հայ պատգամավորները, լինելով օրենսդիր մարմնի ներկայացուցիչներ, մի կողմից, ձեռնամուխ եղան բարենորոգումների նախագիծ կազմելուն և այն մեծ տերություններին հավուր պատշաճի ներկայացնելուն, մյուս կողմից՝ ստանձնեցին երիտթուրքական իշխանությունների հետ բանակցելու դժվարին ու վտանգավոր գործը: Թեև 1914 թ. մայիսի 1-ին իր աշխատանքներն է սկսել օսմանյան երրորդ գումարման խորհրդարանը, սակայն այն իր գործունեության ընթացքում ոչ մի առիթով անգամ հարևանցիորեն չի անդրադարձել Հայկական հարցին:

Հայկական հարցի վերաբացման նախադրյալները և նախապատրաստական աշխատանքները: 1908-1912 թթ. օսմանյան խորհրդարանում հայ պատգամավորները ամեն պատեհ առիթի բարձրացնում էին Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու հարցը, ներկայացնում էին խնդրագրեր, հուշագրեր, կազմակերպում էին քննարկումներ: Այսուհանդերձ, երիտթուրքական իշխանությունները կա՛մ խուսափում էին այդ հարցից, կա՛մ պարզապես լռեցնում էին հայ պատգամավորներին: 1912 թ. հունիս-հուլիս ամիսներին Օսմանյան կայսրությունում տեղի է ունենում հեղաշրջում, իշխանության է գալիս «Հյուրիեթ վե իթիլյաֆ» («Ազատություն և համաձայնություն») կուսակցությունը, որը 1912 թ. հուլիսին անժամկետ լուծարում է երկրորդ գումարման խորհրդարանը՝ պատճառաբանելով Բալկանյան պատերազմի բռնկմամբ: Խորհրդարանի բացակայության և կառավարության անգործության պայմաններում արևմտահայությանն այլ ելք չէր մնում, քան դիմել մեծ տերություններին Հայկական հարցի լուծման համար:

Իթիլյաֆի իշխանության գալուն և խորհրդարանի լուծարմանը զուգահեռ Արևմտյան

Հայկական հարցը 1912-1914 թթ.: Օսմանյան խորհրդարանի
 հայ պատգամավորների արտախորհրդարանական գործունեությունը
 The Armenian Issue in 1912-1914 and the Extra-Parliamentary
 Activities of the Armenian Deputies of the Ottoman Parliament

Հայաստանի տարբեր վայրերում, հատկապես Վանում, նոր թափ է տրվում հայության սպանություններին ու թալանին: Վանի, Բաղեշի, Մուշի ու Սեբաստիայի առաջնորդարանները նամակներ էին ուղարկում Կ. Պոլսի պարտրիարքին՝ ներկայացնելով այդ նահանգներում կատարված աղետալի իրադարձությունները: 1912 թ. հուլիսի 19-ին Աղթամարի կաթողիկոսությունից հեռագիր է ստացվում պատրիարքարան Բաղեշում, Խիզանում ու Շատախում վեց հայերի սպանության մասին (Нерсисян, 1983, 228): Վանից ևս մի քանի հեռագրեր նման բովանդակությամբ պատրիարքարանը ստանում է դրան հաջորդած ժամանակաշրջանում: Այդպիսի մի հեռագիր էլ ստացվում է Մուշից սեպտեմբերի 1-ին՝ նշելով նաև այն մասին, որ կառավարությունը ոչինչ չի ձեռնարկում (Нерсисян, 1983, 228):

Այդ ջարդերը տազնապ էին առաջ բերել ողջ հայության մեջ: Առավել վտանգավոր էր այն, որ այս անգամ դրանք կրում էին ծավալային ու շարունակական բնույթ:

1912 թ. աշնան սկզբին Օսմանյան տերության արտաքին քաղաքական դրությունը ճգնաժամային էր: Իտալա-թուրքական պատերազմը դեռ չավարտված՝ պետությունը ներքաշվեց նոր՝ առավել վտանգավոր պատերազմի մեջ: Սեպտեմբերի 25-ին Օսմանյան կայսրությանը պատերազմ հայտարարեց Չեռնոգորիան: Շուտով վերջինիս միացան նաև Բալկանյան երեք պետություններ՝ Հունաստանը, Բուլղարիան ու Սերբիան: Եթե իտալա-թուրքական պատերազմում Օսմանյան կայսրությունը կորցրել էր իր աֆրիկյան տարածքները, ապա Բալկանյան պատերազմը սպառնում էր նրան դուրս վռնդել Եվրոպայից: Իթիլյաֆական իշխանությունը, որ Օսմանյան կայսրությունում տևեց ընդամենը մի քանի ամիս, ոչ միայն չկարողացավ նվազագույնի հասցնել պետության տարածքային կորուստները, այլև չիրականացրեց իր իսկ խոստացած բարեփոխումները: Այս քաղաքական ուժը նույնիսկ չվերաբացեց խորհրդարանը: Արևմտահայությունը, որն այդ պահին թե՛ հոգեբանորեն և թե՛ ֆիզիկապես գրեթե վերապրում էր համիդյան ջարդերը, ոչ մի հակակառավարական քայլ չձեռնարկեց՝ իր դժոխային դրության վրա իշխանությունների ուշադրությունը սևեռելու համար: Արևմտահայ գործիչները բավարարվեցին միայն ներքին գործերի նախարարությանն ուղղված նամակ-բողոքագրով: Դժբախտաբար, իթիլյաֆական կառավարությունը ականջալուր չեղավ հայության բողոքի ձայնին: Արդյունքում Հայկական հարցը՝ որպես Արևելյան հարցի շարունակություն, վերածվելով թուրք-հայկական հակամարտության, դարձավ Օսմանյան կայսրության ամրությունը ստուգող ահեղ փորձության մի մասնիկը (Дадрян, 2007, 237):

1912 թ. սեպտեմբերի 26-ին Ալեքսանդրապոլում տեղի ունեցած համաքաղաքային ժողովը դիմեց Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցին, որպեսզի վերջինս միջնորդի ռուսաց կայսր Նիկոլայ Երկրորդի առջև արևմտահայերին աջակցելու խնդրանքով (Միմոնյան, 2013, 15):

Հոկտեմբերի 2-ին կաթողիկոսը կոնդակ ստորագրեց, որով Մեսրոպ Եպիսկոպոս Տեր-Մովսեսյանին հրահանգում էր մեկնել Պետերբուրգ և ռուսական իշխանություններին համոզել՝ ստանձնելու հայերի հովանավորությունը: Միաժամանակ ընդառաջ գնալով հայ ազգային գործիչների խնդրանքին՝ հայոց հայրապետը մեկ այլ կոնդակով եզիպտահայ

ազգային գործիչ Պողոս Նուբար փառալուծական պատերազմի ժամանակահատվածում և հանձնարարեց պատվիրակություն կազմել՝ եվրոպական տերություններին Հայկական հարցը ներկայացնելու համար:

Տեր-Մովսեսյանն իր հետ Պետերբուրգ տարավ Ամենայն հայոց կաթողիկոսի նամակը և Կ. Պոլսի պատրիարք Հովհ. Արշարունու գրությունը՝ ուղղված Նիկոլայ Երկրորդ կայսերը՝ դրանք հոկտեմբերի 9-ին հանձնելով Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին (Միմոնյան, 2013, 36): Վորոնցով-Դաշկովը դրանք անմիջապես հանձնեց նախարարների խորհրդի նախագահ Վ. Ն. Կոկովցովին, որը հաջորդ օրը պետք է տեսակցություն ունենար կայսեր հետ: Վ. Կոկովցովի հանդիպումը կայսեր հետ հետաձգվեց, և Վորոնցով-Դաշկովը առաջարկեց Տեր-Մովսեսյանին հանդիպել արտգործնախարար Ս. Դ. Սազոնովի հետ: Հաջորդ օրը փոխարքան հայանպաստ բովանդակությամբ նամակ գրեց՝ փոխանցելով կայսերը:

Հոկտեմբերի 17-ին եպիսկոպոս Տեր-Մովսեսյանը վերջապես հանդիպել է արտգործնախարար Ս. Դ. Սազոնովի հետ (Միմոնյան, 2013, 41): Վերջինս, գրուցի ժամանակ չքաքցնելով հայերի նկատմամբ ունեցած իր համակրանքը, հնարավոր է համարել ապագա վեհաժողովում պաշտպանել նրանց դատը: Ավելին՝ նախարարը նույնիսկ խորհուրդ է տվել այս հարցով դիմել նաև մյուս պետություններին և ձգտել, որ ապագա բանակցություններում հայերն ունենան իրենց պատգամավորությունը:

Նոյեմբերի 5-ին արտգործնախարար Ս. Դ. Սազոնովը Կ. Պոլսի ռուսաց դեսպան Ս. Ն. Գիրսին է ուղարկել թուրքահայերի պաշտպանության հարցով նախարարների խորհրդի նախագահ Կոկովցովի 1912 թ. հոկտեմբերի 31-ի նամակը՝ խնդրելով այդ հարցով տալ եզրակացություն: Պատասխան նամակում դեսպանը հայտնում էր, որ ինքը հավանություն է տալիս հայոց կաթողիկոսի նախաձեռնությանը (Միմոնյան, 2013, 51):

1912 թ. դեկտեմբերի 22-ին կաթողիկոս Գևորգ Ե-ին ուղղված նամակում Կովկասի փոխարքան տեղեկացնում էր, որ ռուսական կառավարությունը արդեն առաջարկություն է արել Թուրքիային՝ բարենորոգումներ իրականացնելու Արևմտյան Հայաստանում՝ միաժամանակ նշելով վերջին տարիներին Արևմտյան Հայաստանում հայերի դրության վատթարացման մասին (Վիրաբյան, 2004, 213):

Հայ պատգամավորների գործունեությունը և բանակցությունները ձախողելու թուրքական իշխանությունների առաջին քայլերը: Թեև Հայկական հարցը ռուսական իշխանություններին ներկայացնելն իրականացվեց հայոց հոգևեր գլուխների միջոցով, սակայն այդ հարցով խիստ անհանգիստ և մտահոգ էին նաև արևմտահայ մտավորականությունն ու հասարակական-քաղաքական գործիչները: Միջազգային հարաբերություններում Հայկական հարցի վերաբացման հեռանկարը հատկապես ոգևորում էր օսմանյան խորհրդարանի հայազգի երեսփոխաններին, մասնավորապես Գրիգոր Զոհրապին:

Օսմանյան խորհրդարանի ամենակարկառուն հոետորներից մեկը՝ Զոհրապը, 1908 թ. հեղաշրջումից հետո՝ մինչև հայկական բարենորոգումների հարցով ռուսական իշխանություններին վեհափառի դիմելը, բացառապես գործել է Օսմանյան կայսրության օրենքների ու նրա պետական շահերի պաշտպանության դիրքերից: Այս պատգամավորը շատ հաճախ կարողանում էր իր գրագետ ու համոզիչ ելույթներով, խորաթափանց ու

Հայկական հարցը 1912-1914 թթ.: Օսմանյան խորհրդարանի
 հայ պատգամավորների արտախորհրդարանական գործունեությունը
 The Armenian Issue in 1912-1914 and the Extra-Parliamentary
 Activities of the Armenian Deputies of the Ottoman Parliament

հեռանկարային ծրագրերով շահել օսմանյան բազմազգ, բազմակուսակցական և բազմախավ խորհրդարանի քվեների մեծամասնությունը: Մակայն երբ չկար խորհրդարան, իսկ կառավարությունը անգործության էր մատնված, ոչինչ չէր մնում արևմտահայ մտավորականության այս տաղանդավոր ներկայացուցչին, քան լծվել ռուսական ու եվրոպական արտաքին գերատեսչություններին Հայկական հարցը լավագույնս ներկայացնելու և հայ ժողովրդի շահերը պաշտպանելու հայրենանվեր գործին:

Գրիգոր Զոհրապը հստակորեն տեսնում էր, որ արևմտահայությունն ու հայկական լեռնաշխարհը ռազմավարական դեր են խաղում ցարիզմի հարավային սահմանների պաշտպանության գործում: Նա համոզված էր, որ Հայկական հարցի վերարձարժման գործում արևմտահայության հիմնական հենարանը Ռուսաստանն էր: Այդ իսկ պատճառով Զոհրապը 1912-1914 թթ. բազմիցս հանդիպեց Կ. Պոլսի ռուսաց դեսպան Մ. Գիրսի հետ:

Դեռևս 1912 թ. նոյեմբերի 13-ին Զոհրապը Ոսկան Մարտիկյանի հետ այցելում է Կ. Պոլսի ռուսական դեսպանատուն, որտեղ Մ. Գիրսին հայտնում են, որ հայ ժողովրդի փրկության ժամը կարող է հնչեցնել միայն Ռուսաստանը (Էջմիածնի Մայր տաճարի դիվանատուն, վավերագիր 288, 3): Հայ պատվիրակները ռուսական դեսպանին հայտնում են հետևյալը. «Ռուս պետությունը, իբրև մերձավոր դրացի հզոր պետություն, կրնա իր թևարկությունը ընծայել մեզ: Իհարկե, խոսք չենք ընել տիրապետության մասին, բայց կարելի է Թրքահայաստանի մասին հարմար կարգադրություն մը ընել, օրինակ, ինչպես Բոսնա-Հերսեթի վարչությունը ժամանակին հանձնվեցավ Ավստրո-Հունգարական պետության, նույնպես Թրքահայաստանը ևս բարեկարգելու հոգն կրնա հանձնվիլ Ռուս պետության» (Էջմիածնի Մայր տաճարի դիվանատուն, վավերագիր 288, նույն տեղում):

Հայկական հարցը միջազգային հարթակում քննարկման առարկա դարձնելու հարցում կարևոր դեր են ունեցել նաև Հայոց ազգային ժողովը և Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը: Վերջինս չի բավարարվում ռուսաց կայսերն ուղղած Հովհ. Արշարունու գրությամբ: 1912 թ. դեկտեմբերի 21-ին պատրիարքարանի խառը ժողովն ընտրում է քաղաքական մի մարմին, որն ստանում է արտաքին ուժերի հետ բանակցելու, բարենորոգումների ծրագիր մշակելու և դրա իրագործմանը հետամուտ լինելու իրավասություններ (Փափագյան, 1952, 184): Այս մարմինն ստանում է «Ապահովության հանձնաժողով» անվանումը: Հանձնաժողովի նախագահն էր Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանը: Կրոնական ժողովի անունից անդամակցում է Գրիգոր վրդ. Պալաքյանը, իսկ քաղաքական ժողովի կողմից ընտրվում են Ստեփան Գարայանը, Ոսկան Մարտիկյանը, Լևոն Տեմիրճիբաշյանը, օսմանյան խորհրդարանի նախկին երեսփոխաններ Համբարձում Պոյաճյանը (Մեծն Մուրադ) և Վահան Փափագյանը (Կոմս) (Փափագյան, 1952, 185): Վերջինս ստանձնում է հանձնաժողովի քարտուղարի պաշտոնը:

«Ապահովության հանձնաժողովին» հաջողվում է մշտական կանոնավոր կապ պահպանել Էջմիածնի, Թիֆլիսի, Մոսկվայի, Պետերբուրգի, Փարիզի և Լոնդոնի հայ հասարակական միությունների և առանձին գործիչների հետ՝ ապահովելով բոլոր ուժերի համագործակցությունը (Փափագյան, 1952, 184):

Օսմանյան կայսրության հետ ապագա բանակցություններում հայկական

բարենորոգումների հարցը բարձրացնելիս անհրաժեշտ էր ունենալ հստակ ծրագիր: Սկզբնական շրջանում կազմվում են 4 տարբեր ծրագրեր (Գևորգ Ե կաթողիկոսի, Մոսկվայի և Պետերբուրգի հայ մտավորականության, Պողոս Նուբար փառայի և պատրիարքարանի): Այնուհետև պատրիարքարանի «Ապահովության հանձնաժողովի» և ազգային պատվիրակության համատեղ բանակցությունների ու քննարկումների արդյունքում 1913 թ. ապրիլին Հովհ. Արշարունին Կ. Պոլսի ռուսական դեսպանատան թարգման Անդրեյ Մանդելշտամին է հանձնում հայկական բարենորոգումների միակ և ամբողջական ծրագիրը (Շարուրյան, 1996, 393): Ա. Մանդելշտամը ծրագիրը ենթարկում է իրավական ձևակերպումների, որից հետո հանձնում է Կ. Պոլսի վեց մեծ տերությունների դեսպանատներին՝ քննարկման համար:

Ընթացող Բալկանյան պատերազմն ու Հայկական հարցի վերաբացումը թուրք կառավարող շրջաններին հարկադրում էին որոշակի քայլեր ձեռնարկել՝ արևմտահայ բնակչության տարրական կարիքները հոգալու համար: 1912 թ. հոկտեմբերի 18-ին կազմվում է նոր կառավարություն՝ իթիյաֆական Քյամիլ փառայի վարչապետությամբ: Նոր կառավարությունը Հայկական հարցում մեծ տերությունների միջամտությունը կանխելու նպատակով սկսեց քննարկել հայկական չորս վիլայեթներում՝ Վանում, Խարբերդում, Բիթլիսում ու Դիարբեքիում բարենորոգումներ անցկացնելու մի նախագիծ, որի հեղինակը ներքին գործերի նախարար Ռեշիդ բեյն էր: Թուրքական նախագծի ի հայտ գալը արևմտահայ հասարակական քաղաքական շրջանների կողմից ընդունվեց ակնհայտ սառնությամբ, քանզի դրանում բացակայում էր գլխավորը՝ բարենորոգումների նկատմամբ վերահսկողությունը:

Դեկտեմբերի 8-ի քննարկմանը մասնակցեցին նաև հայազգի անհատ գործիչներ, որոնք արևմտահայ ժողովրդին ներկայացնելու լիազորություններ չունեին: Հրավիրյալների թվում էր նաև օսմանյան խորհրդարանի նախկին պատգամավոր Նազարեթ Տաղավարյանը, որը ոչ միայն քննադատության ենթարկեց Ռեշիդ բեյի նախագիծը, այլև դեկտեմբերի 11-ի երկրորդ քննարկման ժամանակ ներկայացրեց հայկական բարենորոգումների իր հեղինակած նախագիծը («Բյուզանդիոն», 12.12.1912): Իթիյաֆական կառավարությունը մերժեց Տաղավարյանի նախագիծը քննարկելու առաջարկը, իսկ որոշ ժամանակ անց մոռացության մատնեց Ռեշիդ բեյի նախագիծն իրագործելու խոստումը:

1913 թ. հունվարի 10-ին իթիյաֆական սպաներ էնվեր ու Թալեաթ բեյերը Կ. Պոլսում իրականացրին հեղաշրջում: 200 զինված անձանց հետ ներխուժելով Բարձր դռան շենք՝ նրանք Քյամիլ փառային ստիպեցին հրաժարական տալ: Հեղաշրջման ընթացքում սպանվեց ռազմական նախարար Նազրմ Փաշան, կառավարության մնացած անդամները կա՛մ ձերբակալվեցին, կա՛մ փախան արտասահման (Միմոնյան, 2014, 345): Հաջորդ օրը մեծ վեճի հռչակվեց գերմանական կողմնորոշում ունեցող իթիյաֆական Մահմուդ Շեքեթ փառային: Հեղաշրջումը ջերմորեն պաշտպանվեց գերմանական կառավարության կողմից, որի թույլտվությամբ «Devre Bank»-ն անհապաղ ֆինանսավորեց նոր կառավարությանը՝ նրան տրամադրելով 150000 թուրքական լիրա (АВІРІ, ф.113 оп.470, д.114, л. 44): Վերադառնալով իշխանության դեկին՝ երիտթուրքերը սկզբում փորձեցին մոռացության մատնել հայկական բարենորոգումների խնդիրը, իսկ այնուհետև, հաշվի առնելով ռուսական դիվանագիտության ակտիվությունը, ստիպված եղան որոշակի քայլեր

Հայկական հարցը 1912-1914 թթ.: Օսմանյան խորհրդարանի
 հայ պատգամավորների արտախորհրդարանական գործունեությունը
 The Armenian Issue in 1912-1914 and the Extra-Parliamentary
 Activities of the Armenian Deputies of the Ottoman Parliament

ձեռնարկել:

Հայկական հարցի միջազգայնացումը ձախողելու նպատակով նրանք հայազգի երեսփոխաններ Գ. Չոհրապի ու Պ. Հալաճյանի միջոցով փորձեցին վերականգնել նախկին հարաբերությունները դաշնակցության հետ: Իթթիհատից բանակցություններին մասնակցում էին Խալիլ բեյը, Թալեաթը և Միդհատ Շյուքրին: Դաշնակցությունը ներկայացնում էին Խաչատուր Մալումյանը (Ակնունի), օսմանյան խորհրդարանի նախկին հայ պատգամավորներ Գարեգին Փաստրմաջյանը (Արմեն Գարո) և Հովհաննես Սերենկուլյանը (Վարդգես): Իթթիհատականները ներկայացրին չորս պահանջ. ա) չօգտվել նրանից, որ Բալկանյան պատերազմի արդյունքում Թուրքիան հայտնվել է նեղ դրության մեջ, բ) չդիմել արտաքին ուժերին, հատկապես Ռուսաստանին, գ) համաձայնության գալ իրենց հետ և անադմուկ առաջ տանել բարենորոգումների գործը, դ) մերժել օտար պետությունների միջամտությունը «ներքին ընտանեկան վեճերին» (Սիմոնյան, 2014, 148): Դաշնակցական գործիչները մերժեցին իթթիհատի պահանջները, քանի որ իթթիհատականների պահանջներն ունեին մեկ ակնհայտ նպատակ՝ վիժեցնել հայկական բարենորոգումների խնդիրը:

Տեսնելով, որ այս հարցը չի կարգավորվում իթթիհատ-դաշնակցություն հարաբերությունների շրջանակում՝ իթթիհատականները դիմեցին հին ու փորձված մեթոդին՝ հայտարարելով ամբողջ կայսրության համար բարենորոգումներ իրականացնելու ցանկության մասին: Մարտի 13-ին հրապարակվեց «Վիլայեթների կառավարման ժամանակավոր օրենք» օրինագիծը, որը հայկական բարենորոգումները փակուղու առաջ կանգնեցնելու ակնհայտ փորձ էր: Օսմանյան խորհրդարանի հայազգի պատգամավորները հանդես եկան այդ օրինագծի խիստ քննադատությամբ՝ մատնացույց անելով իթթիհատի իրական նպատակները: Գրիգոր Չոհրապի գնահատմամբ այդ օրենքի նվիրագործման դեպքում «հայ տարրը զրկված պիտի ըլլա որևէ ներկայացուցչութենե, բացի պարագայեն, որ կառավարության բարյացակամությունը ուզե պարզել, որպես շնորհ» (Չոհրապ, 2013, 45-46):

Գրիգոր Չոհրապի գործունեությունը: Առհասարակ հայկական բարենորոգումների հարցով Օսմանյան խորհրդարանի երեսփոխաններից առավել ջանասիրաբար զբաղվում էր Գրիգոր Չոհրապը: Նա բազմիցս հանդիպումներ է ունենում ինչպես Կ. Պոլսի ռուսական դեսպան Մ. Գիրսի, այնպես էլ դեսպանատան առաջին թարգման Ա. Մանդելշտամի հետ:

1913 թ. ապրիլի 12-ին Գ. Չոհրապը՝ որպես պատրիարքարանի ներկայացուցիչ, այցելում է Կ. Պոլսի ռուսական դեսպանատուն՝ ծանոթանալու պատրիարքարանի ծրագրի նկատմամբ ռուսական դեսպանության դիրքորոշմանը: Դեսպան Մ. Գիրսը ներկայացնում է իր դիտարկումները և շեշտում հատկապես արևմտահայության թվի վերաբերյալ պատրիարքարանի ներկայացրած վիճակագրությունը, ըստ որի՝ հայերի ընդհանուր քանակը Արևմտյան Հայաստանում հաշվվում էր 38,6 տոկոս: Մ. Գիրսը կասկած է հայտնում, որ սա կարող է պատճառ դառնալ հայկական բարենորոգումները մերժելու համար: Չոհրապը պատասխանում է դեսպանին, որ այդ փաստը պայմանավորված է հայ ժողովրդի անցած մաքառումների ճանապարհով, և ավելացնում է, որ միայն թվաքանակով

չպետք է որոշվի այս կամ այն ժողովրդի դերը երկրամասի տնտեսական ու մշակութային կյանքում: Հենց այդ ժամանակ էլ Ձոհրապը որպես իր խոսքերի ապացույց Գիրսին է հանձնում իր հեղինակած «Սվազի վիլայեթը տնտեսական ու ազգագրական առումներով և հայերի դրությունը» աշխատությունը (Ձոհրապ, 2013, նույն տեղում):

1913 թ. մայիսի վերջերին, երբ տարածվում է Արևմտյան Հայաստանում իրականացվող ջարդերի լուրը, Ձոհրապը կրկին հանդիպում է Կ. Պոլսում ռուսական դեսպան Մ. Գիրսի հետ՝ առաջարկելով երիտթուրքական կառավարությանը հասկացնել, որ Ռուսաստանն այլևս թույլ չի տա հայկական ջարդերի կրկնություն: Ձոհրապը կարծում էր, որ ռուսական կառավարությունը պետք է հստակ հայտարարի «թե հայկական ջարդ մը Ռուսսիո կողմանե անմիջապես ազդու միջամտություն մը առաջ պիտի բերե...» (Էջմիածնի Մայր տաճարի դիվանատուն, 288, 83):

Ձոհրապի՝ ռուսական դեսպանին դիմելը պայմանավորված էր նրանով, որ ըստ հայ երեսփոխանի՝ Ռուսաստանն անգնահատելի դեր է խաղում Հայկական հարցում: Նա քաջ գիտակցում էր ցարիզմի բարյացակամ դիրքորոշման իրական շարժառիթները: Ձոհրապի կարծիքով Ռուսաստանը ձգտում էր սահմանակից հայկական վիլայեթներում իր ազդեցությունը հաստատել, որովհետև այդ շրջանների նվաճումը կարևոր փուլ էր իր մերձավորարևելյան ծավալապաշտական քաղաքականության իրականացման ճանապարհին: Այս առումով հայերը՝ որպես հուսալի բարեկամներ, ոչ միայն պատերազմի ժամանակ, այլև խաղաղ պայմաններում կարող էին շոշափելի նպաստ բերել Ռուսաստանի տնտեսական, ռազմական ու քաղաքական ներթափանցմանը:

Արևմտյան Հայաստանում ծայր առած ջարդերն ու թալանը իսկապես կրում էին ծավալային բնույթ: Այս առիթով 1913 թ. մայիսի 18-ին Կ. Պոլսի հայոց պատրիարքը խնդրագրով դիմում է վարչապետ Մահմուդ Շևքեթ փաշային (Нерсияня, 1983, 260): Խնդրագրին կից պատրիարքը մեծ վեզիրին է հանձնում նաև հավելված, որում մանրամասն ներկայացված էր 1913 թ. ապրիլի 29-ից մայիսի 18-ն ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած ավազակությունների ընդհանուր և մանրակրկիտ նկարագիրը (Нерсияня, 1983, 261): Ջարդերի մասին չարագուշակ լուրերը խիստ անհանգստացնում էին արևմտահայ քաղաքական գործիչներին:

Ձոհրապը՝ արևմտահայ քաղաքականական մտքի առաջամարտիկներից մեկը, իր ողջ ժամանակը նվիրել է Հայկական հարցի լուծմանն ուղղված աշխատանքներին: 1913 թ. Գրիգոր Ձոհրապը Արշակ Չոպանյանի օգնությամբ Փարիզում Մարսել Լեար կեղծանվամբ տպագրեց «Հայկական հարցը փաստաթղթերի լույսի տակ» ֆրանսերեն աշխատությունը՝ այստեղ տալով Հայկական հարցի ծագման, զարգացման և լուծման ուղիների ամփոփ շարադրանքը: Ա. Չոպանյանը խիստ գաղտնի էր պահում հեղինակի ով լինելը: Անգամ հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան չգիտեր, որ Մարսել Լեարը նույն ինքը՝ Գրիգոր Ձոհրապն է:

1913 թ. Հայկական հարցի նախաձեռնությունն իր ձեռքում պահելու նպատակով ռուսական դրվանագիտությունը նպատակահարմար գտավ ունենալ հայկական բարենորոգումների սեփական նախագիծ: Կ. Պոլսի ռուսական դեսպանության առաջին թարգման Ա. Մանդելշտամը հանձնարարություն ստացավ մշակելու հայկական բարենորոգումների նախագիծ: Ա. Մանդելշտամն ամենօրյա շփման մեջ էր Կ. Պոլսի հայ

Հայկական հարցը 1912-1914 թթ.: Օսմանյան խորհրդարանի
 հայ պատգամավորների արտախորհրդարանական գործունեությունը
 The Armenian Issue in 1912-1914 and the Extra-Parliamentary
 Activities of the Armenian Deputies of the Ottoman Parliament

հասարակական-քաղաքական շրջանների, այդ թվում՝ և Ջոհրապի հետ: Հետևաբար, չի բացառվում Ա. Մանդելշտամի նախագծի ստեղծման աշխատանքներում Ջոհրապի մասնակցության հնարավորությունը:

Մեծ տերությունների բանակցությունները: 1913 թ. հունիսի 14-ին վեց տերությունների՝ Կ. Պոլսի դեսպանատների ներկայացուցիչներից կազմվեց հանձնախումբ՝ Ա. Մանդելշտամի նախագիծը քննելու համար (Միմոնյան, 2013, 540): Նախքան կբացվեր Կ. Պոլսի դեսպանաժողովը, Օսմանյան կայսրության մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան հատուկ շրջաբերականով դիմեց վեց տերությունների՝ Կ. Պոլսի դեսպաններին՝ հայտնելով, որ կայսերական կառավարությունն արդեն ավարտել է ընդհանուր բարենորոգումների մշակումը, ուստի ձեռնամուխ լինելով դրանց իրագործմանը՝ տերություններից խնդրում է նյութական ու բարոյական օժանդակություն ցույց տալ (АВПРИ, ф. Посольство в Константинополе, оп.517/2, д.3728, л.105): Հունիսի 19-ին երիտթուրքերը Կ. Պոլսի դեսպանություններին հանձնեցին Օսմանյան կայսրության ընդհանուր բարենորոգումների վերաբերյալ իրենց նախագիծը՝ ամփոփված «Շրջաբերական հեռագրում», 1913 թ. մարտի 18-ի «Վիլայեթների կառավարման ժամանակավոր օրենքի» լրացուցիչ հոդվածներում և գլխավոր տեսուչների իրավասություններին վերաբերող հրահանգներում:

Ա. Մանդելշտամի նախագծի քննարկումները տեղի ունեցան հունիսի 20-ից հուլիսի 11-ը Կ. Պոլսի Ենի Քյոյ թաղամասում գտնվող ավստրո-հունգարական դեսպանատանը գումարված տերությունների ներկայացուցիչների կոնֆերանսում: Ռուսական կողմը պնդում էր առանց որևէ փոփոխությունների իր նախագծի հաստատման վրա, մինչդեռ գերմանական կողմը պաշտպանում էր օսմանյան կառավարության նախագիծը (Записки Джемал-Паши, 1923, 227): Ենի Քյոյում Եռյակ դաշինքի՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի ջանքերի շնորհիվ ռուսական նախագիծը մերժվեց: Երիտթուրքական կառավարությունն ամեն ինչ արեց հայկական բարենորոգումների գործը տապալելու համար:

Ենի Քյոյի բանակցություններից հետո՝ 1913 թ. ամռանը, ընթացան ռուսգերմանական բանակցությունները, որոնց ակտիվորեն ներգրավվեց նաև Գրիգոր Ջոհրապը: Վերջինս անգնահատելի ավանդ ունեցավ Պետերբուրգի և Բեռլինի միջև հայկական բարենորոգումների հարցի շուրջ համաձայնություն կայացնելու համար: Ջոհրապը նշանավոր արևելագետ, դոկտոր Յոհաննես Լեփսիուսի միջոցով և պատրիարքարանի աջակցությամբ ուղղակի բանակցություններ սկսեց Կ. Պոլսի գերմանական դեսպանատան հետ՝ հայկական բարենորոգումների վերաբերյալ ռուսգերմանական փոխզիջումային տարբերակ գտնելու համար (Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ֆ Գրիգոր Ջոհրապ, գ73, թ12): Արդեն օգոստոսի սկզբին Լեփսիուսը Ջոհրապին տեղեկացրեց, որ գերմանական կողմը, ի տարբերություն մեկ հայկական նահանգ ստեղծելու ռուսական պահանջի, առաջարկում է Արևմտյան Հայաստանը բաժանել երկու սեկտորների, որոնց գլուխ կանգնելու էին տերությունների համաձայնությամբ նշանակված եվրոպացի վերատեսուչները: Միաժամանակ գերմանական կառավարությունն ընդունում էր սեկտորների՝ ինչպես գլխավոր խորհուրդներում, այնպես էլ վարչական ու դատական

մարմիններում քրիստոնյաների ու մահմեդականների միջև հավասարության սկզբունքի կիրառման անհրաժեշտությունը:

Ուշագրավ է, որ գերմանական արտաքին գերատեսչությունը իր՝ փոխզիջման գնալու պատրաստակամության մասին առաջինը հայտնել է ոչ թե ռուսական կողմին, այլ Գրիգոր Չոհրապին: Այս փաստը հաստատվում է նաև Կ. Պոլսի ռուսական դեսպան Մ. Գիրսի՝ օգոստոսի 3-ին Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովին ուղղված «գաղտնի» վերտառությամբ հեռագրով, որում դիվանագետը նշում է, որ գերմանական դիվանագիտությունը հայկական բարենորոգումների հարցում իր փոխզիջումային տարբերակի մասին հայտնել է Գրիգոր Չոհրապին, և որ ինքն էլ այդ մասին իմացել է հենց Չոհրապից (АВПРИ, ф. Канцелярия МИД, оп.470, д.115, л. 98):

1913 թ. ամռանն ընթացող ռուս-գերմանական բանակցությունների ժամանակ իթթիհատակաները փորձել են վիժեցնել հնարավոր համաձայնությունը: Այդ նպատակով ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը Հանս Վանգենհայմի զինվորական կցորդի ուղղորդմամբ փորձել է բանակցություններ սկսել հայկական կողմի հետ: Հանդիպումը տեղի է ունեցել Չոհրապի տանը: Իթթիհատականներից մասնակցում էին Թալեաթ բեյը, Խալիլ և Ֆեհմի էֆենդիները, իսկ հայերից՝ Գ. Չոհրապը, Հ. Շահրիկյանը և Վարդգեսը (Միմոնյան, 2013, 567): Երիտթուրքերը փորձում էին հանդիպմանը պաշտոնական տեսք տալ և տպավորություն ստեղծել, թե հայերի հետ համաձայնություն են կայացնում, ուստի ռուս-գերմանական փոխզիջումային տարբերակն ավելորդ է: Չոհրապն ու հանդիպման մյուս հայ ներկայացուցիչները ճիշտ կռահեցին իթթիհատականների հեռագնա մտադրությունը և անորոշ ժամանակով հետաձգեցին Թալեաթի՝ կրկին տեսակցելու ու արդեն պաշտոնապես բանակցելու առաջարկը (ՀՀԱԱ, Ֆ. 57 ց. 5, գ. 49, թ. 1416): Բացի դրանից՝ 1913 թ. օգոստոսին կայացած ՀՅԴ 7-րդ ընդհանուր ժողովը որոշում ընդունեց Հայկական հարցի լուծման գործում այլևս հույսեր չկապել իթթիհատի հետ (Փամպուքեան, 2014, 29): Այսպես ավարտվեց երիտթուրքերի և հայկական կողմի միջև բանակցությունների առաջին փուլը:

Երկրորդ փուլը սկսվեց Փարիզ մեկնած օսմանյան խորհրդարանի նախկին փոխնախագահ Պետրոս Հալաճյանի՝ Կ. Պոլիս վերադառնալուց հետո: Սեպտեմբերի սկզբին Թալեաթը ցանկություն հայտնեց Հայկական հարցի շուրջ բանակցելու Հալաճյանի հետ և նրան տալու միջնորդի կարգավիճակ: Թալեաթի հետ բանակցելուց առաջ Հալաճյանը դիմեց «Ապահովության հանձնաժողովի» երկու անդամների՝ նրանց կարծիքը իմանալու համար: Երկու գործիչներն էլ բացասական պատասխան տվեցին՝ համարելով, որ դա խիստ վտանգավոր է (Միմոնյան, 2013, 568): Չնայած բացասական պատասխանին՝ Պ. Հալաճյանը երկու հանդիպում ունեցավ Թալեաթի հետ, որոնք ևս ավարտվեցին անարդյունք:

Երիտթուրքերի ու հայկական կողմի միջև ընթացող բանակցությունների ժամանակ Կ. Պոլսի գերմանական դեսպան Հ. Վանգենհայմը անսպասելիորեն հրաժարվեց Մանդեղլտամի նախագծի կապակցությամբ Լեփսիուսի միջոցով կատարված բոլոր զիջումներից՝ առաջարկելով բավարարվել թուրքական ծրագրով: Գերմանական դիվանագիտության այս առաջարկը նպատակ ուներ հայկական շրջաններին ցույց տալու, որ ռուսական ծրագիրը հիմնովին անընդունելի է, և որ նրանց մնում է միայն մեկ ելք՝ համաձայնության գալ թուրքական կառավարության հետ:

Հայկական հարցը 1912-1914 թթ.: Օսմանյան խորհրդարանի
հայ պատգամավորների արտախորհրդարանական գործունեությունը
The Armenian Issue in 1912-1914 and the Extra-Parliamentary
Activities of the Armenian Deputies of the Ottoman Parliament

Գերմանական կառավարության անսպասելի շրջադարձը ուղղակի շարժեց հայկական կողմին: Պատրիարքարանը, իրեն խաբված զգալով, օգոստոսի 29-ին մեծ տերությունների Կ. Պոլսի դեսպաններին հանձնեց հատուկ հուշագիր: Նրանում առաջադրված էին հայկական բարենորոգումների հինգ ծրագրային պահանջներ. 1. հայկական վեց վիլայեթների միավորումը եվրոպացի գեներալ նահանգապետի գործադիր իշխանությամբ,

2. գեներալ-նահանգապետի նշանակումը մեծ տերությունների համաձայնությամբ, 3. մարզի բոլոր վարչական և դատական պաշտոնյաներին նշանակելու ու հեռացնելու գեներալ-նահանգապետի բացառիկ իրավունքը,

4. մահմեդականների և քրիստոնյաների միջև հավասար ներկայացուցչության սկզբունքի կիրառումը,

5. եվրոպական հսկողության հաստատումը:

Պատրիարքարանի կարծիքով այս պահանջները ամեն դեպքում պետք է անխախտ մնային, քանի որ դրանք հայկական բարենորոգումների անկյունաքարերն էին (АВІРІИ, ф. Канцелярия МИД, оп.470, д.115, л. 147):

Օգոստոսի վերջերին, երբ հայկական շրջանները ընդհատեցին երիտթուրքերի հետ բանակցությունները, գերմանական կառավարությունը ստիպված եղավ վերանայել իր մարտավարությունը: Հայկական բարենորոգումների հարցում գերմանական դիրքորոշման փոփոխության մասին Սվազի հայ երեսփոխան Կարապետ Փաշայանը հայտնեց Գրիգոր Չոհրապին՝ նշելով, որ Բեռլինից ստացված իր հեռագիրը շատ գոհացուցիչ է (Շարուրյան, 1996, 407):

Օգոստոսի 28-ին պետքարտուղար Ֆոն Յոզովը հայկական բարենորոգումներին նվիրված հուշագրով դիմեց ռուսական կառավարությանը՝ պատրաստակամություն հայտնելով գտնել միջոց, որը կբավարարեր բոլոր տերություններին: Սեպտեմբերի սկզբներին Մ. Գիրսի և Հ. Վանգենհայմի միջև ընթացան բանակցություններ, որոնց ընթացքում ռուսական կողմը ստիպված համակերպվեց սեկտորների բաժանումն ըստ թուրքական ծրագրի իրականացնելու հետ: Իր հերթին, գերմանական կողմը զիջում էր գլխավոր տեսուչներին մեծ տերությունների համաձայնությամբ նշանակելու և սեկտորներում հավասար ներկայացուցչության սկզբունք կիրառելու հարցում: Ի վերջո՝ սեպտեմբերի 10-ին, փոխզիջումների շնորհիվ ռուսական ու գերմանական դեսպանների միջև հաստատվեց համաձայնություն հայկական բարենորոգումների 6 կետերից բաղկացած ծրագրի շուրջ: Սեպտեմբերի վերջերին Մ. Գիրսն ու Հ. Վանգենհայմը հայկական բարենորոգումների ռուս-գերմանական ծրագիրը ներկայացրին երիտթուրքական կառավարությանը:

Բանակցությունները տապալելու իթթիհատի վերջին փորձը և ռուսական կողմի քայլերը: 1913 թ. հոկտեմբերի 13-ին Օսմանյան մեծ վեզիրը Կ. Պոլսի ռուսական դեսպանությանը հանձնեց հատուկ գրություն, որում հայտնելով ամբողջ կայսրությունում բարենորոգումներ անցկացնելու իր հաստատ մտադրության մասին՝ Բ. դուռը պարտավորվում էր անհապաղ գործադրել այդ առթիվ իր հրապարակած բոլոր օրենքները

(Կիրակոսյան, 1972, 291):

Վարչապետի գրությունը անմիջական պատասխան չէր տալիս ռուսգերմանական ծրագրի պահանջներին: Ընդհակառակը, խուսափելով կոնկրետ հարցերի քննարկումից՝ երիտթուրքական կառավարությունը կրկին ձգտում էր կեղծ խոստումներով խուսափել հայկական բարենորոգումների իրագործումից: Ինչպես պարզվեց Ս. Գիրսի և Սայիդ Հալիմի հոկտեմբերի 13-ի հանդիպման ժամանակ, թուրքական կառավարությունը, ի տարբերություն ռուս-գերմանական ծրագրի, երկու հայկական սեկտորների համար պահանջում էր ոչ թե եվրոպացի գլխավոր տեսուչներ, այլ խորհրդականներ թուրք տեսուչների համար: Իթթիհատականները հայտարարեցին, որ իրենք մտադիր են անհապաղ նշանակել թուրքահպատակ գլխավոր տեսուչներ, իսկ հետո նրանց համար մեծ տերություններից խնդրել եվրոպացի խորհրդականներ: Նույնիսկ նշվեցին տեսուչների հավանական թեկնածուների անունները, որոնցից մեկը Օսմանյան խորհրդարանի նախկին փոխնախագահ Պ. Հալաճյանն էր: Այդ կերպ երիտթուրքերը ցանկանում էին ռուսական կառավարությանը կանգնեցնել կատարված իրողության առջև՝ հարկադրելով նրան համակերպվել եվրոպացի խորհրդականների նշանակման հետ:

Հայկական բարենորոգումների գործը տապալելու նպատակով թուրքական կառավարությունը փորձեց բանակցությունների մեջ մտնել Կ. Պոլսի հայ հասարակական շրջանների հետ: Իթթիհատի պարագլուխներ Թալեաթն ու Խալիլը պարբերաբար դիմում էին նորընտիր պատրիարք Զավեն Եղիայանին՝ համոզելով հրաժարվել եվրոպական վերահսկողությունից: Նոյեմբերի վերջերին Թալեաթը, իր մոտ հրավիրելով պատրիարքարանի ներկայացուցիչներին, խոստացավ խորհրդարանում հայ պատգամավորների թիվը 12-ից հասցնել 18-ի («Русское слово», 23.11.1913): Միաժամանակ երիտթուրքերը դիմեցին սպառնալիքների գործելակերպին: 1913 թ. դեկտեմբերին Կ. Պոլսի նահանգապետ Ջեմալ փաշան, իր մոտ կանչելով խորհրդարանի նախկին երեսփոխան, դաշնակցական Հովհաննես Մերենկույանին (Վարդգես), ասել է. «Եթե դուք պնդեք եւրոպական քննարկի մասին, մենք ստիպուած պիտի լինինք ընդունիլ: Բայց ասոր արդիւնքը այն կ'լլայ, որ այդ վեց վիլայեթներուն իսլամ ազգաբնակչոյիւնը ոտքի պիտի ելլէ, և 3-4 հարիւր հազար հայեր պիտի կոտորուին...» (Արմեն Գարօ, 1990, 134): Երբ Վարդգեսը հարցրել է նահանգապետին, թե ինչու է այդպես ասում, վերջինս պատասխանել է. «Որպէսզի դուն ալ երթաս ձերիններուն ըսես՝ խելքերը գլուխին հաւաքեն» (Արմեն Գարօ, 1990, նույն տեղում):

1913 թ. աշնանը Գերմանիան դուրս եկավ բանակցային գործընթացից, ինչը պայմանավորված էր գերմանացի զորավար Լիման ֆոն Սանդերսի՝ Օսմանյան կայսրությունում ռազմական առաքելության հետ: 1913 թ. վերջերին ռուսական կառավարության համար պարզ դարձավ, որ երիտթուրքական կառավարությունն առանց վճռական ներգործությունների չի ընդունի հայկական բարենորոգումները: Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովը վարչապետ Վ. Կոկովցովին առաջարկել է ռազմական բնույթի միջոցառումներ իրականացնել, ինչպես, օրինակ, Կովկասյան սահմանին ռազմական խոշոր ուժերի կենտրոնացումը: Ռազմական բնույթի միջոցառումներին զուգընթաց, ռուսական կառավարությունն անմիջականորեն աջակցեց Պողոս Նուբար փաշայի՝ Բ. դռան վրա ֆինանսական ճնշում գործադրելու առաջարկի

Հայկական հարցը 1912-1914 թթ.: Օսմանյան խորհրդարանի
 հայ պատգամավորների արտախորհրդարանական գործունեությունը
 The Armenian Issue in 1912-1914 and the Extra-Parliamentary
 Activities of the Armenian Deputies of the Ottoman Parliament

իրականացմանը:

Ռազմական ու ֆինանսական բնույթի ճնշումները ժամանակավոր բնույթ էին կրելու, ուստի ռուսական դիվանագիտությունը շտապեց արագացնել համաձայնագրի կնքումը: Արդյունքում 1914 թ. հունվարի 26-ին ռուսական հավատարմատար Կ. Գուլկևիչն ու Օսմանյան կայսրության մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան ստորագրեցին հայկական բարենորոգումների ռուս-թուրքական համաձայնագիրը:

1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրով նախատեսվում էր Արևմտյան Հայաստանը բաժանել երկու սեկտորների: Սեկտորներից յուրաքանչյուրի գլուխ նշանակվում էր եվրոպացի ընդհանուր տեսուչ: Տեսուչներին առաջարկում էին մեծ տերությունները և հաստատում էր Բ. դուռը 10 տարով: Տեսուչներին էին ենթարկվելու վարչական, դատական, ոստիկանական ու անհրաժեշտության դեպքում նույնիսկ ռազմական ուժերը: Հողային վճիռները որոշվելու էին տեսուչների անմիջական վերահսկողությամբ: Դպրոցները պահվելու էին ինչպես վիլայեթի ընդհանուր բյուջեի, այնպես էլ հավատակիցների հանգանակությունների հաշվին: Խաղաղ ժամանակ յուրաքանչյուր օսմանահպատակ իր զինվորական ծառայությունը իրականացնելու էր այն զինվորական շրջանում, որտեղ ապրում էր: Համիդիե գնդերը չէին վերացվելու, բայց վերածվելու էին պահեստային հեծելազորի: Վերակազմավորվում էր վարչական մարմինների աշխատանքը: Վարչական մարմիններում աշխատելու էին հավասար թվով մահմեդականներ և ոչ մահմեդականներ (Միմոնյան, 2013, 865): Տեսուչներն ընտրվում էին չեզոք երկրներից: Կ. Պոլսում Ավստրո Հունգարիայի դեսպան Պալավիչինին մարտի 24-ին Բ. դռանն է ներկայացրել 5 թեկնածուների ցուցակ: Երկար քննարկումներից հետո՝ ապրիլի 2-ին, Բ. դուռն ընտրել է հոլանդացի Լուիս Վեստենենկին ու նորվեգացի Նիկոլաս Հոֆֆին (Միմոնյան, 2013, 917):

Հայկական բարենորոգումների հունվարի 26-ի համաձայնագիրը, թեև իր արմատականությամբ զիջում էր Մանդեյշտամի նախագծին, առավել ևս պատրիարքարանի ծրագրին, այսուհանդերձ մեկ քայլ առաջ էր թե՛ Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածից և թե՛ Մայիսյան ծրագրից, քանի որ օսմանյան կառավարությունը հենց ռուսական կառավարության առջև էր պարտավորվում իրականացնել բարենորոգումներ:

Հայկական բարենորոգումների հունվարի 26-ի համաձայնագիրը, չնայած իր թերություններին, անկասկած, հաջողություն էր արևմտահայության համար, քանի որ որոշ երաշխիքներ էր տալիս նրա կյանքի, պատվի ու ինչքի ապահովության համար:

Եվրոպացի տեսուչների ժամանումը և երիտթուրքերի գործողությունները: Հայկական բարենորոգումների վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագիրը և եվրոպացի տեսուչների նշանակումը աննկարագրելի կերպով ոգևորել էին հայկական շրջաններին: Հայերի ոգևորությունն ակնհայտ երևում էր Կ. Պոլսի հայկական բոլոր եկեղեցիներում պատրիարք Զավեն Եղիայանի ընթերցած հունիսի 30-ի կոնդակից, որում պատրիարքը կոչ էր անում համատեղ աշխատանքով լծվելու արևմտահայության տնտեսական ու կրթական վիճակի բարգավաճմանը: Պատրիարքարանը նաև կազմում է տեսուչների իրավունքներին ու պարտականություններին վերաբերող նախագիծ՝ հիմնված հունվարի 26-ի ռուս-

թուրքական համաձայնագրի վրա, որը, սակայն, մերժվում է թե՛ տեսուչների և թե՛ երիտթուրքական կառավարության կողմից: Երիտթուրքական իշխանությունները ունեին տեսուչների հետ կապված իրենց սեփական ծրագիրը, ինչը երևում է Թալեաթի ու տեսուչների միջև կայացած 1914 թ. մայիսի 10-ի «Տեսուչների իրավասությունների մասին» համաձայնագրով:

1914 թ. մայիսի 1-ից իր աշխատանքներն էր սկսել օսմանյան նորընտիր խորհրդարանը («Դաշինք», 3.05.1914): Նույն օրը երդման արարողությանը մասնակցում էր այդ պահին արդեն իսկ ընտրված ինը հայ պատգամավոր՝ Պետրոս Հալաճյանը (Կ. Պոլիս), Գրիգոր Չոհրապը (Կ. Պոլիս), Գեղամ Տեր-Կարապետյանը (Մուշ), Օննիկ Իսաանը (Իզմիր), Տիգրան Պարսամյանը (Սվազ), Արթին Պոշկեզեյանը (Հալեպ), Մատթեոս Նալբանդյանը (Գոգան), Կարապետ Թումայանը (Կեսարիա) և Հակոբ Խոլաքյանը (Մարաշ) (Meclisi Mebusan Zabıt Ceridesi i1, 1 Mayıs 1330 (1914), s 2-3): Հայ պատգամավորների թիվը մինչև տարվա վերջ հասնում է 15-ի: Փաստորեն երիտթուրքերը չէին պահել բանակցությունների ժամանակ տված այն խոստումը, թե խորհրդարանում հայ պատգամավորների թիվը հասցնելու էին 18-ի: Այս խորհրդարանն իր առաջին նստաշրջանում զբաղվում էր Բալկանյան պատերազմի ժամանակ ընդունած, հիմնականում ֆինանսական հարցերին վերաբերող, «ժամանակավոր օրենքների» պարտադիր, մեկ ընթերցմամբ հաստատման անդեմ աշխատանքով, ինչին, ի դեպ ընդդիմանում են Գրիգոր Չոհրապն ու Վարդգեսը (Meclisi Mebusan Zabıt Ceridesi i1, 1 Mayıs 1330 (1914) s28): Այդ օրենքներում ոչ մի խոսք չկար Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու մասին: Երիտթուրքերը ոչ մի բարեփոխում չէին իրականացնում նաև «Ձորակոչի մասին օրենքում»:

Բարենորոգումների գործադրմանն օժանդակելու տրամադրությունները էլ ավելի ուժեղացան, երբ Կ. Պոլիս ժամանեցին հայկական վիլայեթների գլխավոր տեսուչներ հոլանդացի Վեստենենկն ու նորվեգացի Հոֆֆը: Նրանց նստավայրերում՝ Էրզրումում ու Վանում, հայերը տոնական պատրաստություններ էին տեսել՝ շքեղ ընդունելություն կազմակերպելու համար: Ոչ պակաս ոգևորություն էր նկատվում նաև օսմանյան խորհրդարանի հայազգի նախկին պատգամավորների շրջանում: Վանի նախկին հայ երեսփոխան Ա. Վռամյանը «Ազատամարտում» լույս տեսած իր հոդվածաշարում տեսուչների անվանում է «Հայաստանի երկու մարզպաններ» (Սիմոնյան, 2013, 1028): Դրանից հետո երիտթուրքերը դադարեցրին Ազատամարտի տպագրումը: Արմեն Գարոն իր հուշերում գրել է, որ Թալեաթի հետ իր վերջին հանդիպման առիթը հենց «Ազատամարտը» վերաբացելու խնդրանքն էր: Թալեաթը թեև ընդառաջում է Փաստրմաջյանի խնդրանքին, սակայն հետևյալ խոսքերն է հնչեցնում. «Բայց ձերոնք համը կը տանին արդեն» (Արմեն Գարո, 1996, 138):

1914 թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ երիտթուրքերը ջանք չէին խնայել Գարեգին Փաստրմաջյանի ընտրությունը ձախողելու համար, ինչի վերաբերյալ նույնպես Գարոն ակնարկում էր հանդիպման ընթացքում:

Էրզրումի նախկին պատգամավոր Գարեգին Փաստրմաջյանը դեռևս զարնանը մեկնում է Եվրոպա՝ տեսուչների հետ ծանոթանալու և արևմտահայության կացությունը ներկայացնելու (Արմեն Գարո, 1996, 135): Եվրոպացի երկու տեսուչները այնքան էին համակրում Արմեն Գարոյին, որ առաջարկեցին իրենց հետ, որպես օգնական մեկնել

Հայկական հարցը 1912-1914 թթ.: Օսմանյան խորհրդարանի
 հայ պատգամավորների արտախորհրդարանական գործունեությունը
 The Armenian Issue in 1912-1914 and the Extra-Parliamentary
 Activities of the Armenian Deputies of the Ottoman Parliament

Երգրում կամ Վան: Ն. Հոֆֆը մի քանի անգամ Թալեաթին առաջարկեց, որ իր ոչ մահմեդական օգնականներից մեկը լինի Փաստրմաջյանը, սակայն Թալեաթն ամեն անգամ խուսափողական պատասխաններ էր տալիս՝ նշելով, թե Գարոյին շատ է հարգում, սակայն քաղաքական առումով նրա թեկնածությունը հարմար չի գտնում (Արմեն Գարո, 1996, 136): Իթթիհատի հետ բանակցությունների ողջ ընթացքում Ն. Հոֆֆն անընդհատ խորհուրդներ էր հարցնում Գարոյից, իսկ վերջինս միշտ բարոյական աջակցություն էր ցույց տալիս արդեն հուսահատված գնդապետին: Ի դեպ, տեսուչների հետ ընկերական հարաբերություններ էր հաստատել նաև Գրիգոր Զոհրապը (Շարուրյան, 1996, 441):

Զնայած հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի կնքմանը՝ երիտթուրքական կառավարությունը շարունակում էր խոչընդոտներ ստեղծել բարենորոգումների իրականացման ճանապարհին: Երիտթուրքական կառավարությունը ռուս-թուրքական համաձայնագրի կնքումից հետո ձեռնամուխ էր լինում Արևմտյան Հայաստանում թափուր պաշտոնները հապճեպ լրացնելուն: Հիմնականում այդ պաշտոններին նշանակվում էին Մակեդոնիայից բերված մահմեդական պաշտոնյաները: Թուրքական դատարանները առանց ձգձգումների և, որպես կանոն, հոգուտ մահմեդականների, շտապ ավարտում էին հողային վեճերի հետ կապված հայցերը: Նոր թափ էր տրվում Բալկանյան թերակղզուց մուհաջիրների վերաբնակեցմանը Արևմտյան Հայաստանում: Իթթիհատի ղեկավարները ծրագրում էին թշնամական ցույցեր կազմակերպել Ն. Հոֆֆի ու Լ. Վեստենենկի դեմ: 1914 թ. մայիսի 10-ին մի կողմից ներքին գործերի նախարար Թալեաթի, իսկ մյուս կողմից եվրոպացի տեսուչներ Հոֆֆի ու Վեստենենկի միջև կնքվեց համաձայնագիր, որը թեև հիմնված էր հունվարի 26-ի պայմանագրի վրա, սակայն իրականում կրճատում էր տեսուչների իրավասությունները (Շարուրյան, 1996, 178): Եթե ռուս-թուրքական համաձայնագրով տեսուչների պաշտոնները գրեթե հավասարեցված էին նախարարին, ապա մայիսի 10-ի հրահանգներով դրանք վերածվում էին նախարարի ենթակաների: Նրանք նույնիսկ չէին կարող աշխատանքից ազատել մյուրասերիֆներին, գայմագամներին, ուսուցիչներին և քննիչներին («Արարատ», 08.1914, 697706): Այդքանով հանդերձ, Ն. Հոֆֆը մեկնում է Վան և ձևավորում է իր աշխատակազմը:

Երիտթուրքերի կողմից անվերջ ստորացումների ու արհամարհանքի արժանանալուց հետո եվրոպացի տեսուչները ազատվեցին աշխատանքից և 1914 թ. ամռանը հեռացան Օսմանյան կայսրությունից: Հուլիսի 24-ին Ն. Հոֆֆը ռուսական նավով լքեց Կ. Պոլիսը: Նրան ճանապարհում էին իր պաշտոնակիցը և Գարեգին Փաստրմաջյանը (Միմոնյան, 2013, 1088): Գլխավոր տեսչին ճանապարհելու չգնաց ոչ մի թուրք պաշտոնյա: Արդյունքում երիտթուրքերին հաջողվեց ևս մեկ անգամ ձախողել բարենորոգումների իրագործումը:

Եզրակացություն: Այսպիսով՝ հայ պատգամավորները, 1908-1912 թթ. խորհրդարանական գործունեության արդյունքում համոզվելով, որ Օսմանյան կայսրությունում նույնիսկ սահմանադրության շրջանակներում անհնար է արևմտահայության իրավունքների պաշտպանությունը, 1912 թվականից սկսած՝ Հայկական հարցի քննարկումը միջազգային դիվանագիտական հարթակում դիտարկում էին որպես բարենորոգումների իրականացման միակ հնարավոր տարբերակ: Նրանք

մասնակցեցին բարենորոգումների ծրագրի կազմմանը և ապահովեցին հայ հասարակական միությունների ու առանձին գործիչների միջև համագործակցությունը: Հայ պատգամավորները հանդիպումներ ունեցան երիտթուրք ղեկավարների հետ մինչև այն պահը, երբ հասկացան, որ իթթիհատի միակ նպատակը հայերի հետ բանակցելով՝ հայկական բարենորոգումների հարցը ձախողելն էր: Օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորներից շատերը խորհրդարանի չգոյության պայմաններում՝ 1912-1914 թթ., ակտիվ մասնակցություն են ունենում բարենորոգումների շուրջ ծավալված միջազգային բանակցություններում և հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի կնքման գործում: Հայ պատգամավորների այն համոզումը, որ երիտթուրքերը մտադիր չէին Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնել, ապացուցվում է ոչ միայն 1908-1912 թթ. երիտթուրքերի ջարդարարական քաղաքականությամբ և 1912-1914 թթ. բանակցություններում որդեգրած ապակառուցողական կեցվածքով, այլև երրորդ գումարման խորհրդարանում նրանց ընդունած օրենքներով, իթթիհատի ծավալած հակահայ գործունեությամբ, ինչպես նաև եվրոպացի տեսուչների իրավասությունների կրճատմամբ և նրանց՝ Օսմանյան կայսրությունից վտարմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ֆ. Գրիգոր Չոհրապ, գ. 73, թ. 12:
2. Էջմիածնի Մայր տաճարի դիվանատուն, վավերագիր № 288, էջ 3:
3. Էջմիածնի Մայր տաճարի դիվանատուն, վավերագիր № 288, էջ 83:
4. ՀՀԱԱ, Ֆ. 57, ց. 5, գ. 49, թ. 1416:
5. Փամպուքեան Ե., Նիլթեր Հ.Յ. դաշնակցութեան պատմութեան համար, Ժ հատոր, 544 էջ:
6. Վիրաբյան Ա., Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), փաստաթղթերի ժողովածու, Հայաստանի ազգային արխիվ, Երևան, 2004, N 5, 792 էջ:
7. **Արմեն Գարո (1990)**, Ապրված օրեր, Քալիֆորնիա, 149 էջ:
8. **Չոհրապ Գ. (2013)**, Սեբաստիայի նահանգը տնտեսական ու ազգագրական տեսակետից և հայերի դրությունը, Հայկական հարցը փաստաթղթերու լույսին տակ, Երևան, 80 էջ:
9. **Փափազյան Վ. (1952)**, Իմ հուշերը, Բ հատոր, Բեյրութ, 610 էջ:
10. Շարուրյան Ա. Ս., Գրիգոր Չոհրապի կյանքի և գործունեության տարեգրություն, 546 էջ:
11. **Միմոնյան Հ. (2013)**, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք V, Երևան, 1296 էջ:
12. **Միմոնյան Հ. (2014)**, 1912-1913 թթ. Բալկանյան պատերազմը և հայերը, Երևան, 502 էջ:
13. «Արարատ», օգոստոս, 1914, էջ 697-706:
14. «Դաշինք», 3.05.1914:
15. Архив Внешней Политики Российской Империи, ф. «Посольство в Константинополе», оп. 517/2, д. 3728, л. 105.
16. АВПРИ, ф113, Канцелярия министра иностр. дел, оп 470, д 114, л. 44:
17. АВПРИ, ф. «Канцелярия МИД», оп. 470, д.115, л.98:
18. АВПРИ, ф. «Канцелярия МИД», оп. 470, д. 115, л. 147.
19. Записки Джемал-Паши, 1913-1919 г.г., Тифлис, 1923, 240 с.
20. «Русское слово», 23 ноября 1913, н. 270.
21. **Дадрян В. (2007)**, История армянского геноцида, этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа, Ереван, 620 с.

Հայկական հարցը 1912-1914 թթ.: Օսմանյան խորհրդարանի
հայ պատգամավորների արտախորհրդարանական գործունեությունը
The Armenian Issue in 1912-1914 and the Extra-Parliamentary
Activities of the Armenian Deputies of the Ottoman Parliament

22. Meclisi Mebusan Zabıt Ceridesi, i:1, 1 Mayıs 1330 (1914), d:3, c:1, içtima senei:1, s 2-3.
23. MMZC, i:1, 1 Mayıs 1330 (1914), d:3, c:1, içtima senei:1, s 28.

REFERENCES

1. E. Ch'arjents'i anvan grakanut'yan ew arvjesti t'angaran, F. Grigor Zohrap, g. 73, t'. 12:
2. Ejmiatsni Mayr tachari divanatun, vavjeragir № 288, էջ 3:
3. Ejmiatsni Mayr tachari divanatun, vavjeragir № 288, էջ 83:
4. HHAA, F. 57, ts'. 5, g. 49, t'. 1416:
5. P'ampuk'jean JE., Niwt'jer H.H. dashnakts'ut'jean patmut'jean hamar, ZH' hator, 544 էջ:
6. Virabyan A., Hamahaykakan khorhrdaks't'yunner (1912-1920 t't'.), p'astat'ght'jeri zh'oghovatsu, Hayastani azgayin arkhiv, JErewan, 2004, N 5, 792 էջ:
7. **Armjen Karō (1990)**, Abrvats örjer, K'ali fornica, 149 էջ:
8. **Zohrap G. (2013)**, Sjebastiayi nahangē tntjesakan u azgagrakan tjesaketits' ew hayjeri drut'yunē, Haykakan harts'ē p'astat'ght'jeru luysin tak, JErewan, 80 էջ:
9. **P'ap'azyan V. (1952)**, Im hushjerē, B hator, Bjeyrut', 610 էջ:
10. Sharuryan A. S., Grigor Zohrapı kyank'i ew gortsunyut'yan tarjegrut'yun, 546 էջ:
11. **Simonyan H. (2013)**, Azatagrakan payk'ari ughinjerum, girk' V, JErewan, 1296 էջ:
12. **Simonyan H. (2014)**, 1912-1913 t't'. Balkanyan patjerazmē ew hayjerē, JErewan, 502 էջ:
13. «Ararat», oğostos, 1914, էջ 697-706:
14. «Dashink'», 3.05.1914:
15. Apxiv Vneshnnejı Politiki Rossijskojı Impjerii, f. «Pocol'ctvo v Konstantinopolje», op. 517/2, d. 3728, l. 105.
16. AVPPI, f113, Kancjeljapıja minictpa inoct. djel, op 470, d 114, l. 44:
17. AVPPI, f. «Kancjeljapıja MID», op. 470, d.115, l.98:
18. AVPPI, f. «Kancjeljapıja MID», op. 470, d. 115, l. 147.
19. Zapicki Dzhjermal-Pashi, 1913-1919 g.g., Tiflic, 1923, 240 c.
20. «Pucckoje clovo», 23 nojabpja 1913, n. 270.
21. **Dadpjan V. (2007)**, İctopıja apmjanckogo gjenocida, etnichjeckıj konflikt ot Balkan do Anatolii i Kavkaza, JEpejevan, 620 c.
22. Meclisi Mebusan Zabıt Ceridesi, i:1, 1 Mayıs 1330 (1914), d:3, c:1, içtima senei:1, s 2-3.
23. MMZC, i:1, 1 Mayıs 1330 (1914), d:3, c:1, içtima senei:1, s 28.

Ներկայացվել է՝ 15.12.2021

Գրախոսվել է՝ 01.03.2022

Ընդունվել է՝ 25.08.2022

Received 15.12.2021

Reviewed 01.03.2022

Accepted 25.08.2022

Получено: 15.12.2021

Рассмотрено: 01.03.2022

Принято: 25.08.2022

E-mail: martino-1988@mail.ru